# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/150**

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար շերտավարագույրի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/150 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ում նշված «Տեխնիկական բնութագիրը» դաշտում ապրանքի նկարգիրը թերի է ներկայացված, անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/150 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ում նշված «Տեխնիկական բնութագիրը» դաշտում ապրանքի նկարգիրը փոփոխվել և շարադրվել է հետևյալ կերպ «...Գալարավարագույրն ունի պարզ կառուցվածք: Գալարավարագույրը բաղկացած է ալյումինե խողովակից, բաց քիվից, կտորից և պտտող մեխանիզմից: Դաբլ տեսակի գալարավարագույրի կտորը երկկողմանի ամրացվում է ալյումինե խողովակին և քիվին, մեխանիզմի միջոցով պտտվելով իջնում կամ բարձրանում է՝ հավաքվելով վերևում ալյումինե խողովակի վրա: Այն ամրացվում է պատին կամ առաստաղին ամրակների միջոցով: 1.Ալյումինե խողովակ Ալյումինե խողովակի տրամաչափը 32 մմ: 2.Գալարավարագույրի մեխանիզմ Գալարավարագույրի մեխանիզմը ամրանում է խողովակին և քիվին, ապահովում է պտույտների աշխատանքը դեպի վերև կամ ներքև: 3.Գալարավարագույրի կտոր 3.1 Գալարավարագույրի կտորը պատրաստված է պոլիէսթերից, ներկված և ներծծված է հատուկ բաղադրության նյութերով՝արևից պաշտպանելու համար: Կտորը կազմված է հորիզոնական հաստ գծերով թափանցիկ և անթափանց զուգահեռվող մասերից, որոնք շղթան քաշելիս հայտնվում են մեկը մյուսի վրա և ապահովում ցանկալի լուսաթափանցելիություն և տեսադաշտ: 3.2 Կտորի որակը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: 3.3 Թափանցելիությունը կառավարվող, մեխանիկական պտուտակների միջոցով: *** Վարագույրների չափագրումը և տեղադրումը կատարվելու է հաղթող ճանաչված մասնակցի կողմից: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված /նոր/: Նախընտրելի գույները կցվում է նկարով: Երաշխիք՝ 12 ամիս»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին 05)
Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am
Պատվիրատու՝ Մեծամորի համայնքապետարան